

Հ. Կ. Կ. Կ. ԱԳԻՏ-ԲԱԺՆԻ ՍԵՐԻԱ № 14

Պրոլետարիատ բոլոր յեղեների, միացե՛ք

ԿԱՐՈ ՂԱԶԱՐՅԱՆ

ԻՆՉՈՒ ՑԵՎ ԻՆՉՊԵՍ ԵԲ


ԸՆԿԵՐ ԼԵՆԻՆԸ

ԿՈՎՈՒՄ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՈՎԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ

Յ Ե Ր Ե Գ Ա Յ Թ

1924



1 MAR 2010
605 NUL 8

355

Դ-15


Պրոլետարիա բոլոր յերկրների, միացե՛ք.

ԿԱՐՈ ՂԱԶԱՐՅԱՆ

ԻՆՉՈՒ ԵՐ ՑԵՎ Ի՞ՆՉՊԵՍ
===== ԸՆԿԵՐ ԼԵՆԻՆԸ =====
ԿՈՎՈՒՄ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱ-
ԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԻ ԴԵՄ

ՏԵՐԵՎԱՐԱ 1924

Տպագրական 8րհման 2-րդ տպարան. Պատուի 34-ի, 8րհմ. 1500.
Դրառնուզմար № 14



18 JUN 2013

40. 720



24356.59

ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉՈՒ ԵՐ ԸՆԿԵՐ ԼԵՆԻՆԸ ԿՈՎՈՒՄ
ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԴԵՄ

Ուղիղ տասը տարի յե անցել այն որից, յերբ սկզբ
վեց համաշխարհային պատերազմի:

Այդ պատերազմը մեծ եր, անոելի, միլիոնավոր զոհեր տվեց, բարեբեր և հարուստ յերկրներ քանդեց: Վասներն այնքան մեծ եին, մարդկային զոհերն այնքան շատ, վոր մինչև հիմա ել չեն կարողանում կարգի բերել յերկիրը, վերաշնել քանդված տներն ու զործարանները, վերամշակել արտերը և այդիները, պատերազմից վնասված ընտանիքների գրությունը բարեյամբ:

Բանվորների և զյուղացիների աշխատավարձից մի-
լիսններ պոկեցին պատերազմը շարունակելու համար,
բայց վոչինչ չարին նրանց դրությունը բարելավելու
համար։

Ավքեցի ելն պատերազմի պատրաստվում, գինում,
դորք հայաբում ու հարձակում գործում:

Պարզ է, նրանք եյին, վորոնք ուզում եյին ավելի հարսանալ գեսից—գենից նոր հողամասեր պոկել, շահագործել այդ նոր հողամասերը, նոր տուրքեր գնել զրափած հողամասերի բանվորների և պատղապիների ուսին:

Մի խոսքով զրանք կապիտալիստներն եյին. Ի՞նչպես
կարող են կապիտալիստները հարստանալ, մեծ գումար-
ներ դիզել, պարզ և, վոր միայն ուրիշին շահագործելով,
պետք է ստիպեն ուրիշներին իրանց համար աշխատելու,
վորպես զի նրանց չնչին աշխատավարձ տան, բայց իրանք
լավ շահ ստանան:

1914 թվականին հայտարարված համաշխարհային
մեծ պատերազմն ահա այս նպատակն ուներ:

Բայց միթե բոլոր յերկրների կապիտալիստներն ել
այդպես պարզ հայտարարեցին, թե հարստանալու համար
բանվորներին ու գյուղացիներին շահագործելու համար են
պատերազմ հայտարարում:

Ի՞նարկե վոչ:

Կապիտալիստական յերկրներում ամեն տեսակի շա-
հագործում ուրիշ կերպ ե տարգում և բացադրվում, այն-
պես, վորպես թե դա արվում ե հայրենիքի սիրո համար,
ազգի պատիվը պաշտպանելու, թշնամուն խորտակելու
համար, այլապես նա մեր յերկիրը կը դրավի և մեղ
կոտրկացնի և այն հազար ու մի գեղեցիկ ու բարի նպա-
տակներ ու պատճառներ: Ու սկսեցին իրար մեղադրել:
Գերմանացին ֆրանսիացուն եր մեղադրում, վոր իրը թե
սա ուզում ե յուր յերկրի մի մասը խլել ֆրանսիացին
գերմանացուն, Ռուսաստանը մեղադրում եր գերմանա-
ցուն, վոր սա կոպիտ ե, վայրենի, ուրիշ ժողովուրդներ
ստրկացնող և հիմա ել ուզում ե, իրը թե Ռուսաստանը
գրավի և ոռու ժողովրդին ստրկացնի: Ռուսաստանը յուր
թերթերում, սրբիկացներում զրում եր այս մասին, ամ-
բողջ աշխարհում հայտարարում, չնայած վոր ամենակու-
պիտ, ամենագաժան կառավարությունը ցարական Ռու-
սաստանի կառավարությունն ե յեղել: Անգլիան ու Ամե-
րիկան ել իրանց հերթին ելին արդարանում ու ուրիշնե-
րին մեղադրում, բայց սրա հետեանքն այն յեղավ, վոր
ամենահամեղ պատաները իւլեցին ու ավելի ուժեղացան:
Իսկ անկշուռմ Ամերիկան ոգտվելով հանգամանքից, Յեփ-
րոպական պետությունների պարտատերը դարձավ ու
վոսկու հարուստ պաշարի տեր դարձավ:

Այսպիսով կապիտալիստական պետությունները յեր-
կու թշնամի բանակի բաժանվեցին: Յերկու կողմերն ել
արագությամբ սպառազինվում ելին, մթերքների հսկայա-
կան պեհեստաներ շինում, մեծ քանակությամբ բանվորներ
ու գյուղացիներ գենքի տակ հավաքում:

Այս ամբողջ աշխատանքը հաջողությամբ տանելու

հոգածար կապիտալիստներն իրանց յերկրների բանվորներին
ու գյուղացիներին վոսկու գեղեց ելին խոստանում, բան-
վորներին 8-ժամյա բանվորական որ և աշխատավարձի
համելում, գյուղացիներին՝ հող և հարկերի թեթևացում:

Բայց դրա փոխարեն մենք ինչ տեսանք: Միլիոնա-
վոր զոհեր, ծաղկած արտերի և դաշտերի քայլքայում,
շատ տեղեր 8-ժամյա բանվորական որվա վերացում, տուր-
քերի շատացում, բազմաթիվ յերիտասարդ ուժերի զենքի
տակ հավաքում և վերջապես, ամեն կողմից ձնշում, քաղց
ու գաղթականություն:

Դեռ ծխում են շեն ու հարուստ գյուղերն ու քա-
ղաքները, գեռ ավերակ դաշտերն ու արտերը չեն ցանվել,
այգիները՝ մշակվել, իսկ բանվորությունն ու գյուղացի-
ությունը վոսկու գեղեցի փոխարեն նոր սովոր ու քայ-
քայման յենթարկվեցին:

Մի կողմից նոր շուկաների գրավում, ավելի դաժան
շահագործում, վորի հետեանքով բուրժվագիան ավելի յե-
հարուստանում, մի քանի տասնյակ կապիտալիստներ նոր
միլիոններ ձեռք բերում, շապալ կյանք, պալատներ ու
ամրոցներ կառուցում, իսկ մյուս կողմից ժողովրդական
լայն շերտերի աղքատացում, հիվանդություններ ու զոհեր:

Պատերազմը վոչինչ չափեց բանվորությանն ու գյու-
ղացիությանը, բայց նոր հողամասեր և շահագործման նոր
աղբյուրներ տվեց կապիտալիստներին:

Հաշտություն կնքվեց. դա Վերսալյան անունով դաշ-
նագիրն եր: Հաղթողները հաղթվողների վզին նոր շղթա-
ներ փաթաթեցին և այդպիսով բազմաթիվ աշխատավոր
մարդկանց նոր սովոր ու քայլքայման յենթարկեցին: Մինչև
հիմա ել գերմանական աղքատ ժողովուրդը տնքում է սո-
վի ճիրաններում: Հաղթող Ֆրանսիան նոր հողեր գրավեց,
հարստացրեց յուր կապիտալիստաներին, բայց յուր բան-
վորներին ու գյուղացիներին վոչ միայն վոչինչ չտվեց,
ընդհակառակն, ավելի փատ պայմանների մեջ դրեց:

Մւր մնացին կապիտալիստների լավ խոստումները,
վոսկի ու հարստությունը:

Դրանք միայն դատարկ ելին, վորպես զի

լայն շերտերին համոզեն թշնամու վրա հարձակվելու և նրանից հարստություն խլելու, վոչ թե այդ լայն մասսաներին հանձնելու, այլ սեփական կապիտալիստներին տալու, նրանց ավելի հարստացնելու:

Ինարկե, մի յերկրի բանվորն ու գյուղացին յերբեք չեն ցանկանա յեղբայրասպան պատերազմով հաղթելու իրանց հարեւան բանվորներին ու ըյուղացիներին, վորպես զի նրանց մահվամբ իրանք հարստանան:

Այն ժամանակ, ահա, յերբ Լապիտալիստները բաժանվել եյին յերկու ուժեղ խմբի, կատաղի արագությամբ զինվում եյին, պատրաստվում պատերազմի, բանվորներն ու գյուղացիները շնորհիվ իրանց անպատճառատականության, դեռ չեյին վորոշել իրանց դերը:

Դեռ մինչև 1914 թիվը բոլորն ել զգում եյին, վոր մի սոսկալի փոթորիկ ել լինելու, մի շահենված պատերազմ: Բոլորն ել պատրաստվում եյին այդ պատերազմին: Կապիտալիստական յերկրների բոլոր գործարաններն ու զավոդները նոր զակազներ ստացան՝ պատերազմը հաջողությամբ տանելու համար մեծ քանակությամբ ռազմամթերք պատրաստել, մթերքների հոկայական ամբարներ շինել և կուտակել: Այս պատճառով ել գործազրկությունը փորոշ չափ թուլացավ: Զե վոր բոլոր գործարաններն ել անդադար աշխատում եյին:

Այս աշխատանքի հետ միասին գործարանառերերն ու բանկիրները զինում հաղցնում եյին բանվորներից ու գյուղացիներից բոնի հավաքած զրբքը: Ծովերում ու ովկիաներում ռազմանավերը ուժեղացնում ու շատացնում, ողում ողանավերը սպառազինում, իսկ ցամաքում արդեն պարզ ե, վոր ամբողջ յերկիրը մի հոկայական դորաբանակ եր դարձել: Զե վոր բոլոր ջահել աշխատող ձեռքերը զենքի տակ եյին կանչված:

Պարզ ե, վոր պատերազմը մի որ պայմենու եր: Միայն կույրերը չեյին կարող նկատել:

Բայց ի՞նչ եյին անում այդ ժամանակ պատերազմի հակառակորդները: Միթե նրանք չեյին կարող այնպես անել, վոր պատերազմ չլիներ:

Դրանցից մի մասը, վոր բուրժվագիայի սեղանի փշրանքներով եր կերակրվում, զբաղված եր միայն դատարկաբանությամբ, այստեղ ու այնտեղ խոսում, վոր իրանք հակառակ են պատերազմի և կրողոքեն յեթե պատերազմ հայտարարվի: Դրանք պացիֆիստներն եյին, վորոնք պատերազմի հենց առաջին որվանից անցան իրանց յերկրի կապիտալիստների կողմն ու պատերազմը համարեցին իբրև մի որբազան, հանուն ազատության, քաղաքակրթության գործ:

Հանգիստ նստած եյին իրանց տեղերը նաև ոեֆորմիստները, այսինքն բանվորների ու գյուղացիների այն ներկայացուցիչները, վորոնք ուզում են պրոլետարիատի դրությունը բարելավեն վոչ թե հեղափոխական ճանապահով, ընդհանուր կովով այլ խաղաղ բարեկարգությամբ, բուրժվագիայի հետ միասին հանգիստ ու թե թեկի տված աշխատելով: Սրանց թիվը շատ շատ եր: Դժբախտաբար պրոլետարիատի մեծամասնությունը դեռ սրանց հավատում եր ու սրանց յետեկից գնում:

Սրանք ունեյին իրանց ուժեղ միջազգային կազմակերպությունը, վոր կոչվում եր յերկրորդ Ինտերնացիոնալը յուր առաջին ընդհանուր համագումարում: կոնգրեսում, վոր տեղի ունեցավ 1889 թվին Փարիզում, վորոշեց վոր պատերազմի դեպքում պետք ելուրջ միջոցների դիմել խանգարելու համար: Պետք ելուրը յերկրների պրոլետարիատը միահամուռ ուժով դուռը գա պատերազմի դեմ:

Հետեյալ միջազգային կոնգրեսներում միջազգային պրոլետարիատը ցույց տվեց այդ կովի ճանապարհը: Պարզ վորոշեց, վոր «պատերազմին պատերազմով պետք ել պատասխանել»: Այսպես Շվեյցարիայի Բազել քաղաքում հավաքված միջազգային համագումարն ավելի կտրուկ դրեց այդ հարցը, այնպիսի միջոցներ ընդգծեց, վոր գրանից պարզ և կտրուկ ճանապարհ չեր կարող լինել: Այսինքն, գործազրու հայտարարել միջազգային մասշտաբով, խանգարել հազարակցության ճանապարհները, գործարաններում խանգարել զինամթերք պատրաստելու աշխատանք-

Ները և վերջապես բոլոր յերկրների բանվորներն ու չքավոր գյուղացիները պետք եւ կազմակերպված լինեն, միմյանց պաշտպաննեն, այնպէս վոր միջազգային բուրժվագիտն իր գեմ ունենա կազմակերպված միջազգային պրուետարիատը։ Այսպիսով պատերազմող կապիտալիստական կողմերը իրանց թիկունքում կունենան մի յերրորդ ներքին թշնամի, վորք կխանդարի; կքայքայի կապիտալիստների բոլոր ձեռնարկությունները ուղղված միջազգային պրուետարիատի գեմ։

Թվում եր, վոր հարցը շատ պարզ եր դրված։

Բայց այդպես չեղափ։ Անտերնացիոնալը վճռականություն չուներ։ Կազմված լինելով մահր—ըուրժվական մարդկանցից և հարուստ, վորակյալ բանվորներից՝ ու ֆորմիստների այդ Ինտերնացիոնալը վոչ միայն վոչ մի վճռական քայլ չարավ պատերազմի գեմ գուրս գալու համաձայն Բազելի համագումարում ընդունված բանաձեռ, այլ, ընդհակառակն, միջազգային կապիտալիզմի մի նոր ոգուական ուժը գարձավ։

Ահա այսպես եր դրությունը, յերբ 1914 թվին համաշխարհային պատերազմն սկսվեց, Բայքայվեց ու ֆորմիստների ինտերնացիոնալը։ Սոցիալիստներն անցան իրենց հայրենի կապիտալի կողմը։ Գերմանացի սոցիալիստները վիլնելմի կողմն անցան, քրանսիացիները՝ իրենց բանկիրների։ Ամեն մեկը ձգում եր ապացուցել, վոր հարձակող կողմը ինքը չե, հարեան պետությունն ե, վոր «արդարությունը», «ճշմարտությունը» իրենց կողմն ե։ Յերկրորդ Ինտերնացիոնալի առաջնորդները իրենց բուրժվական յերկրի կառավարության կազմի մեջ մտան, մինիստրներ դարձան։ Իսկ շարքային բանվորական և աղքատ գյուղացիական մասսան առանց ղեկավարների մասնվ, մյուս կողմից չունենալով կուռ կազմակերպություն, առարարուծվեց, քայքայվեց և մինչեւ անգամ մի ուժ չկազմեց բողոքելու համար։

Բայց միջազգային հեղափոխական պրուետարիատի հարազատ զավակները, նրա լավագույնները քնած չեյին։ Յերկրորդ Ինտերնացիոնալի բոլոր կոնգրեսներում ել մի խմբակ կար, վոր ավել կտրուկ, ավելի խորն եր հաւ-

կանում պրուետարիատի շահերը և չեր գաղարում գասակարգին պայքարի տեսակետից։ Այդ խմբակը փոքր եր թվով, քիչ ել հետեղոներ ուներ, բայց ուներ լավ և կորովի առաջնորդներ, ինչպես Պլեխանովը, Ռոզա Լյուկսեմբուրգը, կարև Լիբերնեխար և մեզ բոլորիս սիրելի ընկ լինին։

Դրանք առաջարկում եյին չգագարել վոչ մի գեպքում դասակարգային պայքար մղելուց, չսափիկ բուրժվագիտի գեղեցիկ լոգունգներից, յերբեք չհավատալ միջազգային կապիտալիստներին, իսկ պտերազմի գեպքում ամենակարուկ միջոցների դիմել, մինչեւ պրուետարիատի զինված ապստամբության։ Նրանք ասում եյին, վոր պացիֆիստների գեղեցիկ խոսքերը ոլատերազմի գեմ և ուժորմիստների համաձայնողական քաղաքականությունը պրուետարիատին կործանման են առնում։ Վոչ մի համաձայնություն բուրժվաղիայի հետ, վոչ մի զիջում։ Ամբողջ ուժը պետք եւ կենտրոնացնել պրուետարիատի կազմակերպության մեջ։ Միջազգային կապիտալին մահացու հարված կարող եւ առա միայն միջազգային պրուետարիատի գանձիակարգային կուռ կազմակերպությունը և վոչ թե համաձայնությունը, պարլամենտը կամ մինիստր դասնալը։

Համաշխարհային պատերազմից գեռ շատ առաջ պրուետարիատի հեղափոխական մարտիկները նախատեսել եյին պատերազմի անխուսափելիությունը, ցույց եյին տվել պատերազմի պատճառները։ Այդ պատճառով ել հենց սկզբից նրանք առաջարկում եյին նախապատերազմական աշխատանքներ կատարել, միջոցներ դանել պատերազմը խափանելու համար և չսպասել հրացանների ու թնդանոթների ձայներին։

Այս խմբակի մեջ աշքի յեր ընկնում ընկեր լենինը։ Ընկեր լենինը պարզ և ամենքից լավ եր հասկանում համաշխարհային պատերազմի վտանգը։ Նա գեռ վազուց նախատեսել եր համաշխարհային պատերազմի անխուսափելիությունը։ Ուու—յապոնական, բալկանյան և թուրք—իտալական պատերազմները համաշխարհային պատերազմի առաջին մասնակի ալիքներն եյին։ Ուրեմն պետք եւ քննել այդ պատերազմիների պատճառներն ու

նպատակները, նախատեսնել համաշխարհային պատերազմը, կազմակերպումը պրոլետարիատի դերն այդ պատերազմում և միջազգային սոցիալիստների անելիքները:

Խորն ըմբռներով այս բոլորը ընկ. Լենինը դրա համար ել առաջարկում եր ավելի աբմատական միջոցների դիմել:

1912 թվի Բազելում գումարած արտակարգ միջազգային կոնգրեսը հենց այս արմատականների ազգեցության տակ ընդունեց անհաշտելի բանաձեռ բուրժազիայի դեմ: Այդ բանաձեռն ասում եր. «կոնգրեսը ուղիղ և պարզ կերպով ցույց է տալիս այն ճանապարհը, վորով պիտի գնան բանվորները, յեթե փոճրադործություն տեղի ունենա, յեթե պատերազմն սկսվի, այդ ճանապարհը քաղաքացիական կովի ճանապարհն ե», «բանվորները փոճրագործություն են համարում իրար կրակել հանուն կապիտալիստների շահերի»:

Հեղափոխական վոգի շնչող այս բանաձեռ այսպես ել մեռած մնաց: Մենք տեսանք, թե ինչպես յերկրորդ ինտերնացիոնալը միացավ միջազգային կապիտալին և այսպիսով մահացու հարված հասցըեց միջազգային պրոլետարիատին: Հենց այս բանը նախատեսնում եր ընկեր Լենինը: Նա շատ լավ եր ըմբռնել ոեֆորմիստների վոգին, նրանց մշտական տատանումները, խուսափումը կտրուկ միջոցներից:

Յեվ յերբ լսվեցին թնդանոթների ձայները, ինտերնացիոնալն այլևս չկար: Սոցիալիստներն անցան «Հայրենիքի պաշտպանության գործին»:

Անա այն ժամանակ, յերբ գաշտերում արյուն եր հոսում, ամեն տեղ ավերածություն ու քայլքայում եր տեղի ունենում, շովինիզմը կուրացրել եր ոեֆորմիստներին, մինչև անգամ այնպիսի սոցիալիստների, վորոնք մի ժամանակ պրոլետարիատի հարազատ պաշտպաններն եին, ինչպես որ. Պլեխանովը. Ծնկեր Լենինն եր, վոր իր հետ ունենալով կարլ Լիբկնեխտին, Ռոզա Լյուկսեմբուրգին, Զինովիևին, ամուր կանգնած եր, իրըև պաշտպան պրոլետարիատի շահերի: Նա եր, վոր չեր մոռացել

միջազգային կոնգրեսների համապետես Բազելի կոնգրեսի, բանաձեռները: Այդ մի բուռն գործիչները, գլուխն ունենալով ընկեր Լենինին, բողոքի և կռվի ձայնը հնչեցրին: Առաջին զոհը դարձավ Կարլ Լիբկնեխտը, վորը ձերբակալվեց և բանդարկվեց: Պրոլետարիատը պետք եր իմպերալիստական պատերազմի դեմ դուրս գար, միջազգային սոցիալիզմը իր ճգնաժամն եր ապրում: Անա մի այսպիսի ժամանակաշրջանում ընկեր Լենինի կոչը, նրա ձայնը ուժեղ եր, կտրուկ և գործնական: Բուրժվագիան կատաղի հալածանք և սկսում, համարում ընկեր Լենինին դավաճան, կաշառված:

Մյուս սոցիալիստ ոեֆորմիստները բանված նեղ ազգային տագնապով, մոռացած հեղափոխական պրոլետարիատի պատգամները, վոչ միայն չեյին լսում այս ձայնը, այլև իրանց հերթին խանգարում ու հալածում:

Պատերազմը պրոլետարիատի միջազգային կապելը կարել եր: Զանգան յերկրների սոցիալիստական կուսակցությունները և բանվորական կազմակերպությունները քայլքայվել եյին և մոռացել իրանց պատմական դերը:

Բանվորական մամուլը հոգուտ բուրժվական շահերի եր ծառայում: Հարկավոր եր նորից համախմբել բանվորներին, կապեր հաստատել, բանվորական կազմակերպությունները վոտքի հանել և իրեկ մի կազմակերպված ուժ պատերազմի դեմ դուրս գալ:

Յեվ անա 1915 թվին շվեցարական մի փոքրից քաղաքում, Յիմերվալդում, հովաքվում են պրոլետարիատին հավատարիմ մնացած մարդիկ վորոշելու համար, թե ինչ դիրք բոնեն տվյալ մոմենտին և ինչպես վերականգնեն պրոլետարիատի քայլքայված կազմակերպությունները:

Յիմերվալդի, պատերազմի ժամանակ հավաքված այդ առաջին միջազգային սոցիալիստական համագումարի հոգին դարձավ ընկեր Լենինը: Նրա ջանքերով տեղի ունեցավ այդ համագումարը և բոլոր գործնական վճիռներն ու բանաձեռները ընկեր Լենինի խմբագրությամբ և անմիջական մասնակցությամբ լույս տեսան:

Այդ համագումարում ել հանդես յեկան ոեֆորմիստները, բայց շնորհիվ ընկեր Լենինի և նրա ընկերների

ջանքերի՝ համագումարն անցավ հեղափոխական սոցիալիզմի վորով:

Չնայած համագումարին մասնակցելու հրավիր ստացել եին բոլոր յերկրների սոցիալիստական կուսակցությունները, բայց յեկան միայ ձախ, հեղափոխական կուսակցությունները: Մեֆորմիստները չցանկացան այդ համագումարին մասնակցել, ավելի լավ համարելով իրանց դավաճանական քաղաքականությունը շարունակել:

Ըսկեր Լենինի առաջարկած բանաձեռքը կորուած և պարզորոշ բաց են անում պատերազմի խսկական նպատակը, աստաոր: Համագումարը բաց ե թողնում մանիքեստ: Մանիքեստում համագումարն առանց վախենալու բացադրում ե, փոր «Յեվրոպայում քառս ե տիրում շնորհիվ պատերազմի, այդ քառսն ստեղծող պատերազմը իմպերալիզմի պառուղն ե, այս պատերազմը բաց ե անում իմպերալիստական պատերազմի խսկական բնույթը: Մանիքեստը դիմում ե բանվորներին և համկացնում ե, փոր սոցիալիստական կուսակցությունները դավաճանել են պրոլետարիատին, մոռացել են Բաղելի և մյուս համագումարների բանաձեռքը և այդ պատճառով ել այդ պատերազմի պատասխանաթվությունը նրանք իրանց վրա յեն վերցնում: Վերջում համագումարը հայտնում ե, փոր զանազան յերկրներից հավաքված պրոլետարիատին հարազատ մնացած պատգամավորները մերժում են ազգային համերաշխության դադարիրը և ընդունում են միջազգային համերաշխությունը, շարունակում են դասակարգային պայքարը, և հավաքվել են նրա համար, փորակեսզի «վերականգնեն կարգած միջազգային կապերը, հիշեցնեն պրոլետարիատին իր պարտականությունը և կոչ են անում պայքար սկսելու հանուն խաղաղության»: Այստեղ ուրեմն առաջին անգամ պատերազմի ժամանակ հարց ե բարձրանում, փոր պրոլետարիատը հոգուտ խաղաղության դուրս գտ:

Դարձյալ չնորհիվ ընկեր Լենինի և նրա ընկերների անդուլ ջանքերի, յերկրորդ կոնֆերենցիան գումարփում և 1916 թվին, դարձյալ շվեյցարիայում, կինոտալ քաղաքում: Այստեղ ել մի մանիքեստ և ընդունվում և հատկապես պատերազմին ու հաշտության վերաբերյալ մի բանաձեւ

Կինոտալի համագումարն ավելի համարձակ ե քննում առյօն պատերազմական մոմենտը և ավելի վճռական յեղակացություններ դուրս բերում: Կոչն անողոք քննադատության և յենթարկում նաև շովինիզմով ըռնված սոցիալիստ-հայրենասերների վարմունքը:

Կոչը մեղադրում է տիրող գաստկարգը, վորովհետեւ «նա և նախապատրաստել և նա և ցանկացել այդ պատերազմը»: Նա ե բանվորներին սպանդանոց տանում, դաշտերն ու արտերն արյունով փողողում, «բանվորներից բոլորը խումբ, վորպեսզի դրանով ապահովի իր սեփականությունը»:

Իսկ «բոլոր յերկրների սոցիալիստները նրանց հետ ձեռք ձեռքի տված են աշխատում, մոռանալով կոնդրեսներում ընդունած բանաձեռքը»:

Ամենահետաքրքիր փաստաթուղթն ե կոնֆերենցիայի ընդունում մի բանաձեւը, փոր քննում և պրոլետարիատի բնուած դիրքը պատերազմի նկատմամբ:

Այստեղ այդ բանաձեւը քննում և բուրժվական սեփականության հարաբերությունները և դրանից առաջացած իմպերիալիստական շահերի հակասությունը: Այս հակասության հետեանքն ե ժամանակակից համաշխարհային պատերազմը: Հետո քննելով պրոլետարիատի կրած վնասներն այս պատերազմում և գտնելով, փոր կապիտալիստական հասարակարգում չի կարելի մշտատե խաղաղություն հաստատել հայտնում և փոր միայն սոցիալիզմը կարող ե համապատասխան պայմաններ ստեղծել մշտական խաղաղություն հաստատելու համար: Այս պատճառով ել պայքարել հանուն հաշտության, նշանակում և պայքարել հոգուտ սոցիալիզմի իրականացման: Դրա համար ել պրոլետարիատի համար կյանքի և մահու ինդիք և դարձել անմիջապես պատերազմը վերջացնելու լողունզը:

Իսկ անմիջական պահանջը պետք ել լինի հաշտություն առանց անեկսիայի, ազգային ճնշման, և առանց դրամական տուգանքի:

Վոչ մի բանաձեւ այնպիսի վճռականությամբ չի արտայայտվել բուրժվական հաստատակարգի և պատերազմի դեմ այս պատերազմի ընթացքում, փորքան կինոտալ կոնֆերենցիայում ընդունած բանաձեռքը և կոչը:

Այստեղ ել ընկեր Լենինը յուր ամբողջ վճռողականությամբ հանդես և գալիս և կոնֆերենցիան տանում և հեղափոխական պրոլետարիատի ձգումներին համաձայն-

Վոչ վոք այնպես խորը և հետեղականորեն չի ըմբանել համաշխարհային պատերազմի իսկական բնոյթը ինչպես ընկեր Լենինը։ Նա եր, վոր այնպիսի համարձակությամբ բացեց բուրժվագիայի իսկական դեմքը, և ցույց տվեց, թե ինչու և նա «հայրենիքի», «ազատության» և «արդարության» մասին խոսում։

Առանց գաղարի և առանց հոգելու ընկեր Լենինը տանում եր յուր կորիք պատերազմի դեմ, կապիտալիստական հասարակակարգերի դեմ և ավելի համառությամբ պայքարում սոցալիստ—հայրենասերների դեմ։

Այդ և պատճառը, վոր վոչ վոք այնքան թշնամի չուներ, վորքան ընկեր Լենինը։ Բուրժվագիան ընկեր Լենինին յուր ամենավտանգավոր թշնամին. Եր համարում, դրա համար ել անվերջ հալածում եր նրան։

Ընկեր Լենինն արդեն վազուց ասել եր, վոր այս պատերազմի հետևանքը լինելու և պրոլետարական հեղափոխությունը։ Վարոշ տվյալների հիման վրա նա գտնում եր, վոր Մուսասատանում հեղափոխություն և ծագելու, և այդ հեղափոխության զիսավոր գործիչը պրոլետարիատն է լինելու։ Սյա պատճառով ել նա կապ և հաստատում Մուսատանի բանվորական կազմակերպությունների հետ և հակառակ Պլեխանովի, նա տանում և այն միտքը, թե Մուսասատանի պարտությունը լինելու և նաև ցարական կառավարության վերջնական անկումը։ Ծնորհիվ ընկեր Լենինի կազմակերպչական շնորիքի, Մուսասատանի քայլագած բանվորական կազմակերպությունները նորից վուրքի կանգնում և պատրաստվում հարվածելու ցարական կառավարությանը։

Այստեղ ել ընկեր Լենինին հանգիստ շեն տալիս։ Ցարական կառավարությունը Լենինին իր ամենավտիսերիմ թշնամին եր համարում և այդ պատճառով մի շաեսնված հալածանք և սկսում նրա դեմ։

Յեվ յերբ թուլացած և քայլայված ցարական կառավարությունն ընկնում և պրոլետարիատի հարգածների տակ ընկեր Լենինը վերագանում և Մուսասատան և մի կատաղի պայքար և սկսում բուրժվագիայի և մենշևիկների ու եսերների դեմ։

Նա ապացուցում ե, վոր Մուսասատանի պրոլետարիա-

տը վոչ մի շան չի սահնա այս պատերազմից, նա, ընդհակառակին, պահնանջում ե, վոր պատերազմը շուտ վերջանա, հաշտություն կնքվի համաձայն ցիմելվարդի և կինտալի վորոշումների։

Ծնորհիվ ընկեր Լենինի կորովի այս միտքն անասելի արագությամբ տարածվում և հեղափոխական պրոլետարիատի շարքերում և նրա հերթական պահնանջը դառնում։

Կատաղի պայքարում Մուսասատանի հեղափոխական պրոլետարիատը հաղթող և հանդիսանում է Հոկտեմբերյան հեղափոխությամբ և այժմ, արգեն, իրու տիրող և հաղթող դասակարգ պատերազմող կողմերին թելադրում է յուր պահնանջները համաձայն ընկեր Լենինի մտքերի։ Հեղափոխական պրոլետարիատն այլև չի ուզում պատերազմել, իզուր յուր յեղբայրների արյունը թափել, վորպես զի միջազգային բուրժվագիան սպառի։ Հակառակ բուրժվագիայի կատաղի պայքարի նրա հակառակության Մուսասատանի պրոլետարիատը հաշտություն և առաջարկում և անմիջապես գործնական միջոցների և զիմում։

Իմպերալիստական պատերազմը վերջանում և Մուսասատանում և այդ մոմենտից սկսում և հեղափոխական պրոլետարիատի հերոսական կոիվը ներքին և արտաքին թշնամիների դեմ բուրժվագիայի դեմ։ Դա քաղաքացիական կովի սկիզբն եր։

Այսպես ընկեր Լենինը կարողացավ պրոլետարիատի հարազատ պահնանջները, նրա պատմական պարտականությունը հաստատ պահել։ Մինչդեռ սոցիալիստ—հայրենասերները պրոլետարիատին քարշ եյին տալիս բուրժվագիայի յետելից, նրա պահնանջները թուլացնում, զարձնում միջազգային կապիտալիզմի գերին, զրկում ինքնուրոյն գործունեությունից՝ մեր սիրելի ընկեր Լենինը հավատարիմ մնաց մեր մեծ ուսուցիչ Կարլ Մարքսին և պրոլետարիատի կարմիր գրոշակը բարձր պահած անցավ ամենավտանգավոր ճանապարհներից, կախվերից և պրոլետարիատին Հոկտեմբերյան մեծ հեղափոխությանը հասցրեց։

Ընկեր Լենինի և նրա ընկերների գործն այն յեղափ, վոր նրանք պարզեցին խմանքի լինաւական պատերազմի իսկական սպատակը։ Մինչդեռ ուժորմիտուները բացագրում եյով վոր 1914 թվի պատերազմը վերջինն և լինելու,


վորից հետո ընդհանուր հաշտություն ե լինելու և խաղաղ կյանք, ընկեր Լենինը դրան հակառակ ասում ե, վոր գա վերջին պատերազմը չե, վոր քանի կազիտալիստական հասարակակարգը գոյություն ունի խաղաղ կյանք չի կարող լինել միայն սոցիալիզմը կարող ե վերջ տալ պատերազմներին: Դրա համար անհրաժեշտ ե ունենալ անկախ, կուռ պրոլետարական դասակարգային կազմակերպություն, բանվորական կոմունիստական կուսացություն, ինչպես խորհրդային հանրապետության մեջ, միայն այդ պայմանով պրոլետարիատն ազատ կմնա կորստաբեր պատերազմներից:

Ուրեմն անհրաժեշտ ե թողնել ռեֆորմիստ սոցիստաներին, յերկրորդ ինտերնացիոնալը և համախմբվել յերրորդ կոմունիստական ինտերնացիոնալի շուրջը:

Ահա այսպես ընկեր Լենինը և յուր ընկերները կազմակերպեցին պրոլետարիատը, պատերազմի դեմ դուրս յեկան առանց վախենալու, առանց նահանջելու, իսկ ոռւսական պրոլետարիատը տարան դեպի հաղթանակ: Նրանք եյին, վոր կամաց կամաց, կանդ չառնելով վտանգների առաջ կարողացան կազմակերպել կոմունիստական կուսակցությունը, վորը հաղթանակի տարավ ոռւսական պրոլետարիատին:

Այժմ յերբ չնորհիվ ընկեր Լենինի և նրա կազմակերպած կոմունիստական կուսակցության խորհրդային հանրապետության մեջ պրոլետարիատի հաղթանակն ե տոնվում, Յեփրոպայում բանվորները գեռ չեն հեռացել յերկրորդ ինտերնացիոնալից, գեռ հավատում են ռեֆորմիստներին: Ահա ընկեր Լենինի միակ ցանկությունն ե ուժեղացնել Յ—Ինտերնացիոնալը, բանվորներին համախմբել կոմունիստական կուսակցությունների շուրջը և նման ոռւսական հեղափոխական պրոլետարիատին համաշխարհային Հոկտեմբերին հասցնել:

Ահա թե ինչպես և ինչու այսպիսի համառությամբ ընկեր Լենինը կոիվ եր մզում բուրժվագիայի դեմ, անապահի ձեռվ ել մենք պետք ե տանենք մեր կոիվը, իբրև ընկեր Լենինի հարազատ աշակերտները:



«Ազգային գրադարան»



NL0217774

40. 426

